ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆԱԾ ԾՐԱԳԻՐԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

17.06.2017 07:50

Հունիսի 16-ին ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի և խորհրդի անդամների նախաձեռնությամբ Գյումրիում իրականացել է մարզերում իրավաբանական անվճար օգնություն տրամադրելու ծրագրի առաջին հանդիպումը:

Անդրադառնալով մարզակենտրոն Pro Bono խորհրդատվություն տրամադրելու Պալատի նախաձեռնությանը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը հիշեցրել է, որ յուրաքանչյուր հինգշաբթի Փաստաբանների պալատում քաղաքացիների համար բաց դռների օր է նշանակված, ինչը գործում է անխափան՝ հնարավորություն տալով բոլորին խորհրդատվության համար դիմել մասնագետներին: Նա տեղեկացրել է, որ անվճար խորհրդատվություններ պարբերաբար կազմակերպվում են նաև մարզերում՝ միաժամանակ ընդգծելով նման ծրագրերի ակտիվացման միտումը: Նրա խոսքով՝ նման նախաձեռնության հիմնական նպատակն է բարձրացնել քաղաքացիների իրավագիտակցությունը, օգտակար լինել այն քաղաքացիներին, ովքեր փաստաբանին դիմելու համար չունեն բավարար միջոցներ: Արա Զոհրաբյանը հանդիպման եկած մարդկանց տեղեկացրել է, որ այսուհետ Գյումրիի փաստաբանները շաբաթական մեկ օր քաղաքացիներին տրամադրելու են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Խորհրդատվությանը դիմած քաղաքացիների հիմնական խնդիրները վերաբերել են վարկային, բնակարանային, հողային և աշխատանքային իրավահարաբերություններին:

Պալատի և խորհրդի անդամներն այցի շրջանակներում հանդիպել են նաև Շիրակի մարզի Հանրային պաշտպանի գրասենյակի գործընկերներին, մարզի փաստաբաններին: Վերապատրաստման դասընթացի շրջանակներում, գործընկերների հետ քննարկվել են մի շարք մասնագիտական խնդիրներ, զրույց է ծավալվել մասնագիտական վարքագծի դրույթների, մասնավորապես՝ փաստաբան-փաստաբան, փաստաբան- հաճախորդ և փաստաբան-դատարան փոխհարաբերություններին առնչվող խնդիրների շուրջ:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ
THE OFFICE OF REGIONAL
COORDINATOR OF SHIRAK MARZ
OF CHAMBER OF ADVOCATES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՖԱՍԱՐԱՆ



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })